



## ԱՐՍԵՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՀՊՏՀ տնտեսագիտության տեսության ամբիոնի ղոցենտ,  
տնտեսագիտության թեկնածու

## ԳԱԳԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ

ՀՊՏՀ ֆինանսական ֆակուլտետի  
«Ապահովագրական գործ» մասնագիտության բակալավրիատի  
4-րդ կուրսի ուսանող

## ԿՅԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԲՆՈՒԹԱԳՐՈՂ ԲԱՂԱՌՅԱԼ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՇՎԱՐԿՄԱՆ ԿԱՐԳԸ

Սույն հոդվածի շրջանակներում նպատակ է դրվել կյանքի որակը բնութագրող ցուցանիշների համակարգում հիմնավորելու բաղադրյալ ցուցանիշների կիրառության անհրաժեշտությունը ՀՀ-ում սոցիալ-տնտեսական զարգացման մակարդակը իրապես գնահատելու և արդյունավետ ծրագրեր մշակելու տեսանկյունից: Նշված նպատակին հասնելու համար կյանքի որակը ուսումնասիրվել է իր դրսնորման երեք մակարդակներում (մակրո, միկրո, մեզո): յուրաքանչյուրն իր հերթին բաժանելով գերակա ուղղությունից: Բոլոր ոլորտների համար առանձնացվել են ցուցանիշների խմբեր, որոնց նկատմամբ էլ ներկայացվել է բաղադրյալ ցուցանիշների հաշվարկման կարգը: Հոդվածում քննարկվում է համապարփակ բաղադրյալ ցուցանիշի կառուցման մեթոդաբանությունը:

**Հիմնաբառեր.** Կյանքի որակ, մարդկային զարգացման համարիվ, բաղադրյալ ցուցանիշ, ենթացուցանիշներ, կյանքի ոլորտ, կյանքի որակի գնահատման ժամանակացույց, սուբյեկտի գնահատում

JEL: J10, J17, J18

Ներկայումս գոյություն ունեն կյանքի որակը բնութագրող բազում ցուցանիշներ, որոնք, ըստ էության, ներկայացնում են կյանքի որակի ոլորտներն արտահայտող ենթացուցանիշներ: Դրանցից յուրաքանչյուրը, առանձին

Վերցրած, միայն մասնակիորեն է բնութագրում կյանքի որակը: Եվ հենց այս պարագայում է առաջանում բաղադրյալ ցուցանիշի կիրառման անհրաժեշտությունը, որը, փաստացիորեն, կյանքի որակի տարբեր ոլորտները բնութագրող ցուցանիշների միավորումն է մեկ ցուցանիշի մեջ: Կյանքի որակի հայցակարգի և դրա բնութագրիչների ընկալման առանցքային հիմնաքարն այն է, որ որակի չափման բոլոր ցուցանիշները, այսպես կոչված, մոտարկումներ են, անուղղակի բնութագրիչներ այն իրական իրավիճակի, որի մասին դատողություններ կատարելու փորձ է արվում: Եթե որակը հնարավոր լիներ քանակական գնահատման ենթարկել, ապա կոդադարեր որակ լինելուց:

Հանրային քաղաքականության մշակման յուրաքանչյուր ասպարեզ և բնակչությանը ծառայություններ մատուցող յուրաքանչյուր բնագավառ այսօր առաջնորդվում են կենսամակարդակի բարելավման գերնպատակով: Այս իմաստով, տնտեսական, սոցիալական, մշակութային և քաղաքական հարթություններում կյանքի որակը ծառայությունների մատուցման ցանկալի հետևանքը կամ արդյունքն է՝ արտահայտված կրթության, առողջապահության, սոցիալական ծառայությունների, ինչպես նաև բոլոր մակարդակներում պետական գործընկերային քաղաքականության ուղղություններով:

**Մարդկային զարգացման համարվի (ՄԶՀ)<sup>1</sup>** կիրառությունն այն առաջին քայլն էր, որով փորձ արվեց գնահատելու «կարողությունները» կամ «դրական ազատությունները»: Դա «ցույց է տալիս, թե դեռ որքան երկիրը պետք է ջանա որոշակի նախասահմանված թիրախներին կամ նպատակներին հասնելու համար, ասենք, օրինակ՝ կյանքի միջին տևողության 85 տարի, ամենքի համար կրթության մատչելիություն, եկամտի արժանավայել մակարդակ և այլն»: Երեք ցուցանիշներից յուրաքանչյուրում՝ երկարակեցություն, կրթության մակարդակ, եկամտը, ՄԶՀ-ն ներառում է յուրաքանչյուր երկրում առկա և թիրախային մակարդակների միջև հեռավորությունը: Ուրեմն, դա իրականում կորուստների կամ վնասների համակարգային ցուցանիշ է, որի դեպքում 1 արժեքը ներկայացնում է լիարժեք ծեռքբերումը, իսկ 0-ն՝ լիակատար կորուստը: Բացի միջերկրային համեմատություններ կատարելու հնարավորությունից, ՄԶՀ-ն նաև կարելի է կիրառել ներերկրյա տարածաշրջանային կամ խմբային համեմատությունների նպատակով: **Փ. Դասգուպտան**<sup>2</sup> (1993) ինքնակառավարման ու ազատությունների սկզբունքի շրջանակներում առաջարկում է ՄԶՀ-ի մեջ որոշակի լրացում ներմուծել, ինչը թույլ կտա մարդկային զարգացման տեսաբանների թեզերի հետ առավել մոտարկել: Նա առաջարկում է ներմուծել ինքնակառավարմանը քաղաքացիների մասնակցության հնարավորության չափի և քաղաքացիական ազատությունների մատչելիության ու կիրառելիության գնահատականներ կամ, այլ կերպ ասած, «բացասական ազատություններ»: Մեկ այլ վտանգ կապված է այն հանգամանքի հետ, որ մարդկային զարգացման նոտեցման չափազանց պարզեցված տարբերակը կարող է դաշնալ բարեկեցիկ հասարակության նմանակումը: Յուրաքանչյուր նոր ծառայություն որպես կյանքի որակի բարելավում դիտարկելը պարզապես կլինի մի շաբթ տեսաբանների զարաֆարների աղավաղում: **Ա. Սենը** (1993)<sup>3</sup>, օրինակ, ընդգծում է, որ «գործողությունը» (ինքնու-

<sup>1</sup> Տե՛ս <http://hdr.undp.org/en/content/human-development-index-hdi>

<sup>2</sup> Տե՛ս Dasgupta P., An inquiry into well-being and destitution. Oxford: Clarendon Press, 1993:

<sup>3</sup> Տե՛ս Sen A., Capability and well-being. In the quality of life, ed. M. Nussbaum, A. Sen, Oxford, 1993:

րույն գործելու կարողություն) համարում է նույնքան կարևոր, որքան «բարեկեցությունը»: Այն կառավարությունը, որն ուղղակիորեն տրամադրում է իր քաղաքացիներին այն ամենը, ինչն անհրաժեշտ է լավ կյանքի համար, կարող է պարզապես թերարժուորել պատասխանատվության և նախաձեռնողականության զարգացումը, որոնք «գործողության» առանցքային տարրերն են:

Ընդհանրապես կյանքի որակի գնահատման գործում անհատական արժեքների դերը մեծապես արժևորող հետազոտողները համակարծիք են՝ կյանքի որակի տիրույթները պետք է կշռվեն այնպես, որ արտացոլվի յուրաքանչյուր անհատի՝ տվյալ ոլորտը կարևորելը: Մասնավորապես՝ **Ֆելս ու Պերին<sup>4</sup>** պնդում են, որ արժեքների վրա հիմնված կշիռները պետք է կիրառվեն և օբյեկտիվ, և սուբյեկտիվ գնահատումների դեպքում, մինչդեռ **Կումինսն**<sup>5</sup> այն տեսակետն է առաջ քաշում, որ միայն սուբյեկտիվ գնահատականներն են նպատակահարմար կշռել անհատական կարևորության սանդղակով, իսկ օբյեկտիվ գնահատականներն, ըստ էության, պետք է լինեն բարեկեցության նորմատիվ ցուցանիշները, այսինքն՝ ընտրված լինեն հասարակության համար ներկայացուցչական նորմերից: Այս տեսակետից շատ կարևոր և, թերևս, առավել հետաքրքիր է նորմերով չափված օբյեկտիվ ցուցանիշների ու արժեքներով կշռված սուբյեկտիվ գնահատականների համեմատությունը, քան դրանք մեկ ցուցանիշում ներառելը: Այս իմաստով, բավական հետաքրքիր մոտեցում է, այսպես կոչված, «Ճեղքվածքի» վերլուծությունը, այսինքն՝ եթե հաշվարկվում է անհատների կամ հասարակության գնահատականների՝ սուբյեկտիվ բարեկեցության և որևէ ընտրված չափանիշի, օրինակ՝ աղքատության մակարդակ, մարդկային զարգացման ցուցանիշ և այլն, միջև տարբերությունը:

Կյանքի որակի հետազոտության տեսակետից, հատկապես, եթե խոսքը սուբյեկտիվ բարեկեցության չափման մասին է, ոլորտի ականավոր ներկայացուցիչներն այն կարծիքին են, որ կյանքի որակի առանցքային ոլորտներն ու դրանց, ինչպես նաև առանձին բնութագրիչների կշիռները պետք է անհրաժեշտաբար տրվեն հենց անհատի արժևորմանը:

**Անհատական կյանքի որակի գնահատման ժամանակացույց<sup>6</sup>:** Սա հարցվող արժեքային համակարգի և նախընտրությունների վրա հիմնված կշռման մեթոդ է, որը ներառում է երեք փուլ: **Առաջինը**, այսպես կոչված, կիսակառուցվածքավորված հարցազրույցն է, որի ժամանակ հարցվողներին խնդրվում է մտածել իրենց կյանքի մասին ու առանձնացնել հիմք ոլորտ (դոմեն՝ տիրույթ), որոնք նրա կյանքի որակի առումով առավելագույն կարևորություն ունեն: **Երկրորդ** փուլում հարցվողը գնահատում է յուրաքանչյուր առանձնացված ոլորտը 0–100 մմ ուղղահայաց անալոգային սանդղակի վրա, որի երկու ծայրանատերն են «լավագույն հնարավոր» և «վատագույն հնարավոր» տարբերակները: Սրանք, փաստորեն, խարիսխներ են, որոնց նպատակը հարցվողին յուրաքանչյուր ոլորտում իր կարգավիճակի գնահատման ասպարեզում որոշակի ազատության աստիճանով օժտելն է: Ըստ էության, այս մոտեցումը չի կենտրոնանում գնահատման որոշակի չափորոշիչների

<sup>4</sup> Steu Felce D. and Perry J., Quality of Life: Its Definition and Measurement, Research in Developmental Disabilities, Vol. 16, No. 1, 1995, էջ 51–74:

<sup>5</sup> Steu Cummins R. A. (1997a). The Comprehensive Quality of Life Scale – Intellectual Disability, Fifth Edition (ComQoL-ID5): Manual. Toorak: Deakin University School of Psychology:

<sup>6</sup> Steu The Schedule for the Evaluation of Individual Quality of Life-SEIQoL - John P. Browne, Ciaran A. O'Boyle, Hannah M. McGee, Nicholas J. McDonald, C. R.B. Joyce, 1997, էջ 301–309:

վրա, ինչպիսիք են, ասենք՝ ֆունկցիոնալ կարգավիճակը կամ բավարարվածությունը, այլ անհատն ինքն է որոշում, թե ինչ չափորոշիչ կիրառի ոլորտի գնահատման համար: Ծրբորդ փուլում քանակապես գնահատվում է յուրաքանչյուր ոլորտի հարաբերական կարևորությունը կամ կշիռը: Մեթոդի նախակզբանական տարրերակում այս տեխնիկան հայտնի էր որպես դատողության վերլուծություն: Վերջինս թույլ է տալիս քանակապես հաշվարկել ընդհանուր դատողության վրա ազդող տարրեր գործոններ: Դատողության վերլուծությունը պահանջում է, որ յուրաքանչյուր անհատ իր իսկ տեսանկյունից գնահատի կյանքի հիպոթետիկ 30 սգենար, որոնցից յուրաքանչյուրը բաղկացած է հինգ ուղղահայաց սյուներից՝ կրկին «լավագույն հնարավորից» մինչև «վատագույն հնարավոր» մասշտաբով: Սյուների արժեքները տարրերվում են սցենարից սցենար՝ ձևավորվելով պատահական վերաբաշխումների արդյունքում, ինչը թույլ է տալիս ունենալ տեղափոխումների առավելագույն քանակ: Հարցվողները դատողություններ են կատարում նմուշային սցենարների վերաբերյալ, որոնք ներկայացված են կյայուն հերթականությամբ: Միակ վարիացիան յուրաքանչյուր սյունակի անվանման համար առաջին փուլում հարցվողների կողմից ընտրված ոլորտների կիրառությունն է: Դատողությունները կատարվում են «վատագույն կյանքի պատկերացումից» մինչև «լավագույն կյանքի պատկերացում» երկու ծայրամասերում: 30 սցենարներից 10-ը կրկնություններ են, ինչը թույլ է տալիս գնահատել դատողությունների համապատասխանությունը: Դատողությունների վերլուծության մեթոդաբանության ժամանակ սա ընդունված ընթացակարգ է: Այնուհետև դատողությունները բազմակի ռեգրեսիոն վերլուծության միջոցով ձևավորում են 5 հարաբերական կշիռներ, որոնց գումարը 100 է: Կշիռները ցույց են տալիս հարցվողի կյանքի որակի համար յուրաքանչյուր ոլորտի հարաբերական կարևորությունը: Սա կարող է բազմապատկել յուրաքանչյուր ոլորտի կարևորության աստիճանի միավորով, և հանրագումարը կներկայացնի ամբողջական կյանքի որակի ցուցանիշը, որը կարող է լինել 0–100 միջակայքում:

Հիմք ընդունելով կյանքի որակի բնագավառում առկա համաշխարհային տեսական ու գործնական փորձը և առաջնորդվելով դրա հնարավոր առավելագույն ընդգրկմամբ ու տեղային առանձնահատկությունների հետ համադրման սկզբունքով՝ տրվել են կյանքի որակի հետևյալ աշխատանքային սահմանումները<sup>7</sup>:

- Անհատի մակարդակ. «Կյանքի որակը տվյալ պահի դրությամբ անհատի ուղղակի և անուղղակի կենսամիջավայրերի համատեքստում որոշակի ֆունկցիոնալության և անհատի արժեհամակարգով ու ընկալումներով պայմանավորված գիտակցված բավարարվածության աստիճանն է»:
- Բնակչության մակարդակ. «Կյանքի որակը տվյալ պահի դրությամբ երկրի օրենսդրական, քաղաքական և ինստիտուցիոնալ միջավայրի համատեքստում, հասարակության որոշակի ֆունկցիոնալության և հասարակական արժեքներով ու ընկալումներով պայմանավորված, երկրում ապրելու բավարարվածության աստիճանն է»:

Նշված սահմանումները հիմք ընդունելով՝ Հայաստանում կյանքի որակի հետազոտության շրջանակը ենթադրում է հետազոտության հիմնարար

<sup>7</sup> Վ. Գյողալյան, Սոցիալական քաղաքականություն (ուսումնական ձեռնարկ), ԵՊՀ, Եր., «Տիր» հրատարակչություն, 2017:

սկզբունքների, հայեցակարգային մոդելի, կյանքի որակի մակարդակների մշակում ու սահմանում: Ընդ որում, պետք է ընդգծել, որ, ընդհանուր առմամբ, նշված հիմնահարցերի վերաբերյալ ազգային շրջանակի մշակումը գերազանցապես հիմնվել է կյանքի որակի՝ ֆելիի և Պերիի, Շելոկի, Կումինսի մոդելների վրա՝ հայաստանյան իրականության և առանձնահատկությունների հետ հնարավորինս ներդաշնակեցմամբ ու լրամշակմամբ: Այսպես՝ կյանքի որակի գնահատման ազգային շրջանակի երեք հիմնարար սկզբունքներն են.

- կյանքի որակի համակողմանի ցուցանիշ ստանալու նպատակով բոլոր մակարդակներում և օրյեկտիվ, և սուբյեկտիվ տեսանկյունների ներառում գնահատման համակարգում,
- գնահատման ժամանակ օրյեկտիվ և սուբյեկտիվ ցուցանիշների ներկայացում առանձին խմբերով,
- կյանքից բավարարվածության՝ որպես սուբյեկտիվ կյանքի որակի դիտարկում, ընդ որում, դրա գնահատում՝ ըստ անհատների զգացական-ձանաչողական ընկալումների:

Հայաստանի Հանրապետությունում կյանքի որակի համակողմանի գնահատման նպատակով տվյալ հետազոտությունը շեշտադրում է կյանքի որակի բաղադրյալ ցուցանիշի կառուցման գաղափարը, որը թույլ կտա անհատի կյանքի տարբեր միջավայրերն ու դրանց գնահատման տարբեր տեսանկյուններն արդյունավետորեն միավորել մեկ ցուցանիշում: Մասնավորապես՝ վերջինս ենթադրում է երանակարդակ և բազմաչափ կյանքի որակի գնահատականի կառուցում: Ըստ Էլույան, բնակչության կյանքի որակի մակարդակ-ների համալիրում ամենաստորին կառուցվածքային միավորը միկրոհամակարգն է: Սա նաև այն եզրափակիչ օղակն է, որի միջոցով անհատի կյանքի առանձքային ոլորտների ու ցուցանիշների՝ տարբեր մակարդակների միջև փոխանցման, քանակական ու որակական ձևափոխումների արդյունքում արտաձվում է անհատի կյանքի որակը՝ միջնորդավորված և գնահատված սուբյեկտիվ ընկալումների ու արժեհամակարգի դիտանկյունից: Հետազոտությունն ընդգրկում է Հայաստանում մշտական բնակվող անհատի կյանքի հետկյալ երեք մակարդակների ուսումնասիրություն՝ մակրոմակարդակ, էկզո-մեզոմակարդակ, միկրոմակարդակ:

#### Կյանքի որակի բաղադրյալ ցուցանիշի կառուցումն ու գնահատումը<sup>8</sup>

Բաղադրյալ ցուցանիշներ են ձևափորվում, երբ առանձին ցուցանիշներ հաշվարկվում են մեկ ցուցանիշի մեջ՝ հիմքում ունենալով նախապես մշակված հայեցակարգ: Բաղադրյալ ցուցանիշների օգնությամբ հնարավոր է պարբերական ուսումնասիրությունների միջոցով որոշակի երևույթների կամ փաստերի փոփոխության վարքագծի մշտադիտարկում իրականացնել: Բաղադրյալ ցուցանիշները սովորաբար չափում են բազմաչափ հայեցակարգեր, որոնք այլ կերպ հնարավոր չեն արտահայտել միայն մեկ ցուցանիշի միջոցով: Դրանց բնորոշ օրինակ է հենց կյանքի որակի ցուցանիշը:

Կյանքի որակի չափման կամ գնահատման ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել երեք կարևորագույն գործոններ:

- մակարդակները և ոլորտները, որոնք ներկայացնում են կյանքը,
- չափորոշիչները, որոնք պետք է օգտագործվեն կյանքի տարբեր ոլորտներ գնահատելու համար,

<sup>8</sup>Տես Ա. Մակարյան, Ա. Բաբայան, Հայաստանի Հանրապետությունում կյանքի որակի ցուցանիշի (QoL Index) հետազոտություն, 2010, էջ 49–54:

- Կշիռները, որոնք պետք է կիրառվեն տարբեր ոլորտների նկատմամբ՝ դրանց կարևորության աստիճանը մատնանշելու համար:

Կյանքի որակի բաղադրյալ ու բազմաչափ ցուցանիշի կառուցվածքում ներառվում են երկու ենթացուցանիշներ, որոնք համախմբում են կյանքի որակի հետազոտության երեք մակարդակները: Դրանցից յուրաքանչյուրն ունի գնահատման ուրույն մեթոդ: Երկու ենթացուցանիշներն են երկրի մակարդակը, որը ունի կյանքի ցուցանիշը՝ մակրոմակարդակի ենթացուցանիշը, որը չափվում է էկզո- մեզո- ու միկրոմակարդակների ենթացուցանիշներով: Երկրի ու անհատի մակարդակները կազմավորում են կյանքի որակի բաղադրյալ ցուցանիշի 100 տոկոսը: Այժմ անդրադարձնանք դրանց առանձին-առանձին:

**Մակրոմակարդակի ենթացուցանիշ:** Ինչպես արդեն ընդգծվել է, սա կյանքի որակի վերին հարթությունն է, որն իր հերթին կազմված է երկու բաղադրիչից՝ իրավիճակի օբյեկտիվ գնահատականից ու Հայաստանում ապրելու սուբյեկտիվ բավարարվածությունից, ինչը, ըստ էության, առաջինի հայելային արտացոլումն է հասարակության բարեկեցության զգացողության տեսակետից: Երկու բաղադրիչները կազմավորում են մակրոմակարդակի ենթացուցանիշի 100 տոկոսը: *Օբյեկտիվ գնահատականի չափման տեղեկատվական հիմք են Ազգային վիճակագրական ծառայության, Համաշխարհային բանկի, Համաշխարհային տնտեսական ֆորումի, Առողջապահության համաշխարհային կազմակերպության, Հերիեթեյջ հիմնադրամի պաշտոնական տվյալները, գնահատականներն ու վարկանիշները:*

Օբյեկտիվ գնահատականում ներառվել է հասարակության կյանքի չորս կարևորագույն ոլորտ, որոնցից յուրաքանչյուրը գնահատվում է համապատասխան ցուցանիշների միջոցով: Օբյեկտիվ գնահատականի չափումը կատարվում է արժեքների ու կշիռների միջոցով, որոնք ստացվում են փորձագիտական հարցումների օգնությամբ: Ցուցանիշների արժեքը կազմված է փորձագետի կողմից կյանքի որակի տեսակետից տվյալ ցուցանիշին տրված կարևորության աստիճանից, որը գնահատվում է 1–4 սանդղակով, և փաստացի ցուցանիշին տրված գնահատականից՝ 1–7 սանդղակով: Բացի ցուցանիշների գնահատումից, փորձագիտական հարցումների միջոցով պարզվում է նաև յուրաքանչյուր ենթաղործի իրավիճակի գնահատականը, կարևորությունը տվյալ ոլորտում (դասակարգելով ըստ կարևորության), ինչպես նաև յուրաքանչյուր ոլորտի կարևորությունը կյանքի որակի համատեքստում (դասակարգվում է ըստ առաջնահերթության): Արդյունքում ձևավորվում է օբյեկտիվ գնահատականի միջին կշռված արժեքը, ինչը, ըստ էության, ամփոփում է մակրոմիջավայրը կազմող ընտրված ոլորտների, ենթաղործների ու համապատասխան ցուցանիշների կարևորությունը և փաստացի իրավիճակի գնահատումը Հայաստանում անհատի ու հասարակության կյանքի որակի ձևավորման տեսակետից: Հայաստանում ապրելու **սուբյեկտիվ բավարարվածության** չափման տեղեկատվական աղբյուր են բնակչության շրջանում կատարված ներկայացուցչական ընտրանքով հարցումների արդյունքները: Դրանց միջոցով, ի լրումն այլ մակարդակների, ոլորտների ու հարցերի (էկզո-մեզո- և միկրոմակարդակներին առնչվող), տրվում են հարցեր այն առնչությամբ, թե որքանով է հարցվողը բավարարված Հայաստանում մակրոմիջավայրը ձևավորող տարբեր երևույթներից ու իրողություններից՝ գնահատված

1–4 սանդղակով: Ընդհանուր գնահատականը ծևավորվում է որպես հարցվողների բոլոր պատասխանների միջին արժեքների միջին:

**Կյանքի որակի մակրոմակարդակի ոլորտները, ցուցանիշներն ու բնութագրիչները**

Ոլորտներադրուտ	Ցուցանիշ	Բնութագրիչ
<b>1) Տնտեսական</b> <ul style="list-style-type: none"> <li>• Ներքին տնտեսություն</li> <li>• Ֆինանսական հատված</li> <li>• Արտաքին տնտեսություն</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>• Զարգացում</li> <li>• Կայունություն</li> <li>• Ապահովություն</li> <li>• Խթաններ</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>• Իրական ՀՆԱ աճի տեմպ,</li> <li>• բնակչության մեկ շնչին բաժին ընկնող ՀՆԱ,</li> <li>• ինֆյացիայի տարեկան տեմպ,</li> <li>• պետական պարտը/ՀՆԱ հարաբերակցություն,</li> <li>• պետական յուցե՛/ՀՆԱ հարաբերակցություն,</li> <li>• համախառն կուտակում,</li> <li>• փոխարժեքի կայունություն,</li> <li>• արտահանում/ՀՆԱ հարաբերակցություն, օտարերկյան ուղղակի ներդրումների ծավալ,</li> <li>• վարկեր/ՀՆԱ (%)</li> </ul>
<b>2) Սոցիալական</b> <ul style="list-style-type: none"> <li>• Կենսամակարդակ</li> <li>• Աշխատանք</li> <li>• Կրթություն</li> <li>• Առողջապահություն</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>• Ապահովություն</li> <li>• Անվտանգություն</li> <li>• Երաշխիքներ</li> <li>• Կարողություններ</li> <li>• Հնտություններ</li> <li>• Ֆունկցիոնալություն</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>• սոցիալական ծախսեր/պետքյուջերի ծախսեր (%),</li> <li>• առողջապահական ծախսեր/ՀՆԱ (%),</li> <li>• կրթության ծախսեր/ՀՆԱ (%),</li> <li>• սոցիալական պաշտպանության ծախսեր/ՀՆԱ (%),</li> <li>• հանգստի, մշակույթի և կրոնի ծախսեր/ՀՆԱ (%),</li> <li>• աշխատումի մասնակցության աստիճան (%),</li> <li>• սոցիալական ապահովության համակարգի որակ,</li> <li>• զբաղվածության մակարդակ (%),</li> <li>• եկամուտների համակենտրոնացման գործակից (Ձինիի ինդեքս),</li> <li>• դրամական եկամուտների բաշխումն ըստ քվինտիլային խնդերի,</li> <li>• աղքատության ցուցանիշներ,</li> <li>• նվազագույն ապառողական զամբյուղի արժեք,</li> <li>• աշխատավարձ և արտադրողականություն,</li> <li>• նվազագույն աշխատավարձի չափ (&lt;&lt; դրամ),</li> <li>• անվանական միջին աշխատավարձ (&lt;&lt; դրամ),</li> <li>• ամսական միջին կենսաբռոշակ (&lt;&lt; դրամ),</li> <li>• աշխատանքի ընդունում և ազատում,</li> <li>• վերապատրաստումների տարածվածություն,</li> <li>• աշխատանքային օրենսդրության խստության ինդեքս,</li> <li>• գործազրկության նպաստի միջին չափ (&lt;&lt; դրամ),</li> <li>• տնային տնտեսությունների սպառողական ծախսեր (%) ամբողջի մեջ),</li> <li>• կյանքի սպասվող տևողություն (տարի),</li> <li>• նանկական մահացություն (1000 կենդանի ծնվածի հաշվով),</li> <li>• ծնելիության և մահացության հարաբերակցություն (%),</li> <li>• նախադպրոցական հաստատությունների քանակ,</li> <li>• հանրակրթական դպրոցներում սովորողների թիվ (1 դպրոցի հաշվով),</li> <li>• հանրակրթական դպրոցներում 1 ուսուցչին բաժին ընկնող աշակերտների թիվ,</li> <li>• միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում սովորողների թիվ (1 հաստատության հաշվով),</li> <li>• բուհերում սովորողների թիվ (1 բուհի հաշվով),</li> <li>• բուհերի շրջանավարտների թիվ (1000 մարդ)</li> <li>• պրֆեսորադասախոսական անձնակազմի թիվ,</li> <li>• կրթական համակարգի որակ,</li> </ul>

		<ul style="list-style-type: none"> <li>գրադարանների ընթերցողների թիվ (1 000 մարդ),</li> <li>թանգարանների քանակ,</li> <li>1 թանգարանի հաշվով տարեկան հաճախումների թիվ,</li> <li>թատրոնների քանակ,</li> <li>1 թատրոնի հաշվով տարեկան հաճախումների թիվ,</li> <li>բժիշկների թիվ (10 000 բնակչի հաշվով),</li> <li>հիվանդանոցային հիմնարկների քանակ,</li> <li>հիվանդանոցային մահճակալների թիվ (10 000 բնակչի հաշվով),</li> <li>1 մահճակալի տարեկան միջին գբաղվածություն (օր),</li> <li>աճբուլատոր-պոլիկլինիկական հիմնարկների քանակ,</li> <li>աճբուլատոր-պոլիկլինիկական հիմնարկների հզորություն (հաճախում մեկ հերթաբիուսում),</li> <li>1 բժշկին բաժին ընկնող բնակչության թիվ,</li> <li>1 հիվանդի բուժման միջին տևողություն (օր),</li> <li>մընուղոս արտանետված վնասակար նյութեր,</li> <li>բնակչության միջին ապահովածություն կացարանով (մեկ բնակչի հաշվով)</li> </ul>
3) Ֆիզիկական ոլորտ և ինստիտուտներ	<ul style="list-style-type: none"> <li>Ենթակառուցվածքներ</li> <li>Ինստիտուտներ</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>Որակ</li> <li>Հասանելիություն</li> <li>Մատչելիություն</li> <li>Ապահովություն</li> </ul> <ul style="list-style-type: none"> <li>գագիփիկացված բնակարանների և բնակելի տների առկայություն (ընդամենը, 1000),</li> <li>սանմաքրնան նշանակության մեքենաների քանակական բաշխվածություն (հատ),</li> <li>ձանապարհների որակ,</li> <li>էլեկտրաէներգիայի մատակարարման որակ,</li> <li>օդային ենթակառուցվածքի որակ,</li> <li>երկաթուղու առկայություն/մատչելիություն,</li> <li>աճրագրված կապուղիներ (100 բնակչի հաշվով),</li> <li>վերգետնյա տրանսպորտային համակարգի որակ,</li> <li>շարժական կապ (100 բնակչի հաշվով),</li> <li>հանացանցից օգտվողներ (100 բնակչի հաշվով),</li> <li>մասնավոր սենյականության իրավունքների պաշտպանություն,</li> <li>դատական հանակարգի անկախություն,</li> <li>կառավարության քաղաքականության քականություն,</li> <li>քաղաքական գործիչների նկատմամբ վստահություն,</li> <li>կառավարության կարգավորման բեռ,</li> <li>ոստիկանական ծառայությունների հուսալիություն</li> </ul>
4) Կայունություն և քաղաքացիական ազատություններ	<ul style="list-style-type: none"> <li>Կայունության աստիճան</li> <li>Քաղաքացիական ազատություններ</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>Թափանցիկություն</li> <li>Իրազեկում</li> <li>Մասնակցություն</li> </ul> <ul style="list-style-type: none"> <li>ազատ և արդար ընթրություններ,</li> <li>քաղաքական և սոցիալական ինտեգրացիա,</li> <li>օրենքի գերակայություն,</li> <li>կազմակերպված հանցագործություններ,</li> <li>արտահայտվելու ազատություն,</li> <li>քաղաքացիական իրավունքներ,</li> <li>կրոնական ազատություններ,</li> <li>քաղաքականության համակարգման կարողություն,</li> <li>առաջնահերթությունների ճիշտ սահմանման կարողություն,</li> <li>կառավարության քաղաքականության իրավանացման կարողություն,</li> <li>կառավարության կողմից ռեսուրսների ճիշտ համակարգում,</li> <li>քաղաքացիական հասարակության մասնակցություն</li> </ul>

**Էկզո-մեզոնակարդակի ենթացուցանիշ:** Այս մակարդակի ենթացուցանիշը կառուցվում է բնակչության հարցումների արդյունքում ստացված տեղեկատվության հիման վրա և առավելապես օբյեկտիվ բնույթ է կրում, այսինքն՝ ուսումնավիրում է անհատի կյանքի որակի վրա ուղղակիորեն (տնային տնտեսություն) և անուղղակիորեն (համայնք) ներգործող միջավայրերի փաստացի պայմանները: Էկզո-մեզոնակարդակի ենթացուցանիշի արժեքն առանձին ոլորտների կշռված հանրագումարն է, իսկ վերջիններիս արժեքը ձևավորվում է որպես յուրաքանչյուր ոլորտում ընդգրկված համապատասխան ցուցանիշների կշռված արժեքների հանրագումար: Ոլորտը կազմող ենթաոլորտների՝ հարցվողների կողմից ըստ կարևորության դասակարգման արդյունքում որոշվում է տվյալ ոլորտի միջին կշիռը ենթացուցանիշում:

#### Կյանքի որակի էկզո-մեզոնակարդակի ոլորտները, ցուցանիշներն ու բնութագրիչները

Ոլորտ/ենթաոլորտ	Ցուցանիշ	Բնութագրիչ
<b>1) Տնտեսական</b> <ul style="list-style-type: none"> <li>Սնունդ</li> <li>Սպառում</li> <li>Բնակարանային/</li> <li>Լենցաղային պայմաններ</li> <li>Կոմունալ հարմարություններ</li> <li>Ենթակառուցվածքներ</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>Արկայություն</li> <li>Հասանելիություն</li> <li>Մատչելիություն</li> <li>Որակ</li> <li>Բազմազանություն</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>սննդաբերքի հասանելիություն, մատչելիություն, որակ, բազմազանություն, սնվելու հաճախականություն,</li> <li>սպառնան մակարդակ, սպառնան կարուցվածք,</li> <li>բնակարանի/կացարանի մեծություն, հարդարման վիճակ, հարմարավետություն, կահավորանք, կենցաղային իրերով ապահովածություն, կոմունալ հարմարավետություն,</li> <li>կոմունալ ենթակառուցվածքների, հաղորդացության/կասպի, տրանսպորտի, գուղաւանտեսական տեխնիկայի /հՀ Երևանում/, գյուղմթերքի հրացման վետերի /հՀ Երևանում/ առկայություն և որակ</li> </ul>
<b>2) Սոցիալական</b> <ul style="list-style-type: none"> <li>Աշխատանք, գրադաժություն</li> <li>Եկամուտներ</li> <li>Սեփականություն/ռեստրուսներ</li> <li>Կրթություն/ուսում</li> <li>Առողջություն</li> <li>Հանգիստ/ժամանց/, մշակույթ</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>Արկայություն</li> <li>Հասանելիություն</li> <li>Մատչելիություն</li> <li>Բազմազանություն</li> <li>Երաշխիքներ</li> <li>Պայմաններ</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>աշխատանքի առկայություն, հնարավորություն, գործարար նախաձեռնողականություն, աշխատանքային պայմաններ /օր.՝ աշխատատեղի մոտիկություն, անվտանգություն և այլն/, երաշխիքներ,</li> <li>ֆինանսական կարգավիճակ, եկամտի աղբյուրների բազմազանություն, ֆինանսական կայունություն,</li> <li>սեփականության/ռեստրուսների առկայություն, բազմազանություն, մատչելիություն,</li> <li>մասմագիտության/որակավորման առկայություն,</li> <li>կրթական/ուսումնական հաստատության առկայություն, հասանելիություն, մատչելիություն, պայմաններ,</li> <li>բժշկական հաստատություններ դիմելու/բժշկական ծառայություններից օգնվելու հաճախականություն, հասանելիություն, մատչելիություն,</li> <li>հանգստի/ժամանցի/, մշակութային վայրերի առկայություն, հասանելիություն, մատչելիություն, դրանցից օգնվելու հաճախականություն</li> </ul>
<b>3) Ծրջակա միջավայր</b>	<ul style="list-style-type: none"> <li>Անվտանգություն</li> <li>Ապահովություն</li> <li>Երաշխիքներ</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>Էկոլոգիական անվտանգություն, ներքին անվտանգության, ապահովության աստիճան, երաշխիքներ</li> </ul>

Կյանքի որակի էկզո-մեզոմակարդակի ենթացուցանիշի առանձին բաղադրիչների հաշվարկի ժամանակ ողջ ընտրանքի համար կատարվում է ըստ հարցվողների միջնացում կամ ագրեգացում, ինչը թույլ կտա հետագայում, ըստ տարիների, առանձին ցուցանիշների միտումներ ուրվագծել:

**Միկրոմակարդակի գնահատման եղանակ:** Միկրոմակարդակի ենթացուցանիշը գնահատում է անհատի՝ կյանքի բավարարվածությունը:

Բավարարվածության գնահատման եղանակներն են՝

- Բավարարվածություն կյանքի սանդղակից կամ ժամանակացույցից (ծնված օրվանից ի վեր՝ ընդհանուր կյանքի գնահատական կամ համընդգրկուն գնահատական<sup>9</sup>),
- Բավարարվածություն կյանքի ոլորտներից (ժամանակի որոշակի պահի):

Ներկայացնենք նաև սուբյեկտիվ բարեկեցության գնահատականը.

**Ժամանակի գործոն:** Հաշվի առնելով բավարարվածության գնահատման վերոնշյալ մոտեցումները և բուն հետազոտության նպատակները՝ որպես ժամանակի պահ ընտրվել է հարցումների անցկացման պահը, իսկ վերլուծությունը հիմնված է որոշակի պահի դրությամբ ստացված արդյունքների վրա: Այս իմաստով, կյանքի որակի ցուցանիշում միկրոմակարդակի ենթացուցանիշի գնահատականը ենթադրում է անհատի կյանքի ոլորտներից բավարարվածության չափումը:

**Կյանքի ոլորտներ:** Ըստ մի շարք ուսումնասիրությունների՝ հետազոտողների<sup>10</sup> կողմից առաջարկվում է կյանքի ոլորտների հետևյալ հիմնական ցանկը. Կենցաղային պայմաններ (բնակարան, դրա վիճակը, կահավորում), սնունդ/սնուցում, ընտանիք (հարաբերություններ, փոխընդունում, շփում), ընկերներ/բարեկամներ (փոխվստահություն, շփում, փոխաշակցություն), ծերաբերումներ, նյութական ապահովվածություն, հանգիստ/ժամանց, ֆիզիկական առողջություն, հոգևոր ոլորտ, քաղաքացիական ազատություն, աշխատանք, ուսում/կրթություն:

**Հիմնական սկզբունք:** Ամեն ոլորտում կիրառվում են այնպիսի չափանիշներ, որոնց միջոցով հնարավոր է լավագույնս ներկայացնել և գնահատել տվյալ բնագավառը: Այնինչ, քանի որ անհատն է որոշում տվյալ չափանիշի կարևորությունը, ապա հարցվող նաև գնահատում է յուրաքանչյուր ոլորտի համար ընտրված չափանիշի կարևորության աստիճանը: Հարցվողի կյանքի որակի տեսանկյունից կարևոր համարվող չափանիշները կներառվեն կյանքի որակի տվյալ ոլորտի գնահատականում: Մյուս կողմից՝ տվյալ ոլորտից բավարարվածության միավորը հաշվարկելիս կներառվեն միայն անհատի (հարցվողի) կողմից կարևորված ցուցանիշները: Հետևապես՝ որպես տվյալ ոլորտի գնահատական հանդես է գալիս կարևոր համարվող ցուցանիշների միջինն անհատի (հարցվողի) մակարդակով, իսկ որպես ոլորտի ընդհանուր միավոր՝ բոլոր հարցվողների միջինը:

**1. Կյանքի որակի միկրոմակարդակի ենթացուցանիշ:** Հաշվարկի քայլերն են.

<sup>9</sup> Stein Diener E., Emmons R. A., Larsen R. J. & Griffin S., The satisfaction with life scale. Journal of Personality Assessment, 1985, 52, 49, 71–92:

<sup>10</sup> Schalock, 2004, Cummins 2005, Rapley, 2003, International Wellbeing Group, 2006, Kahn et al, 2001, Wahl et al, 2004.

- ցուցանիշի միավորի հաշվարկման ժամանակ միայն անհատների (հարցվողների) կողմից կյանքի որակի տեսակետից ամենակարևոր համարվող ոլորտներն են հաշվի առնվում (ամենակարևոր մի քանի ոլորտ, որոնց քանակը որոշվում է հետազոտության միջոցով և կարող է տարեցտարի փոփոխության ենթարկվել),
- յուրաքանչյուր ոլորտի կշիռ է համարվում տվյալ ոլորտն ամենակարևորը համարող հարցվողների ճշգրտված տոկոսն ընդհանուրի մեջ,
- ընտրված ամենակարևոր համարվող ոլորտների կշռված արժեքների/միավորների հանրագումարը համարվում է ցուցանիշի միավոր,
- ցուցանիշի միավորը բերվում է 0–1 սանդղակի՝ այլ ցուցանիշների հետ համադրելիությունը պահպանելու նպատակով:

**2. Բավարարվածություն կյանքի բոլոր ոլորտներից:** Սա յուրաքանչյուր հարցվողի՝ կյանքի ոլորտների բավարարվածության միավորների միջինն է: Այստեղ ոլորտների քանակը կարող է տարբեր լինել յուրաքանչյուր հարցվողի համար, քանի որ, եթե յուրաքանչյուր ոլորտում հարցվողը նշած լինի, որ տվյալ ոլորտի ցուցանիշներն իր համար կարևոր չեն, ապա այդ ոլորտը բացառվում է հաշվարկից: Ուսանող համարվող հարցվողների համար կա լրացնեցին մեկ ոլորտ: Աշխատանքի ոլորտը գնահատվում է միայն աշխատողների համար: Միավորը բերվում է 0–1 սանդղակի՝ համադրելիությունն այլ ցուցանիշների հետ պահպանելու նպատակով:

**3. Սուբյեկտիվ բարեկեցություն:** Թեպետ Բրունին և Պորտան (2007)<sup>11</sup> առաջարկում են ներառել կյանքի համընդգրկուն գնահատականը սուբյեկտիվ բարեկեցության գնահատականի մեջ, հետազոտության նպատակներից ելնելով և ժամանակային համապատասխանություն ապահովելու համար հետազոտության մեջ կիրառվող սուբյեկտիվ բարեկեցության գնահատականը ներառում է հետևյալ բաղադրիչները՝

- Հոյզեր (դրական և բացասական). բաղկացած է 2 խմբից: Յուրաքանչյուր խմբի միավորը տվյալ խմբում ներառված հոյզերի միջինն է, իսկ որպես անհատի հոյզերի միավոր՝ այդ 2 խմբի միավորների միջինը:
- Բավարարվածություն կյանքի բոլոր ոլորտներից. յուրաքանչյուր հարցվողի կյանքի ոլորտների բավարարվածության միավորների միջինն է:

Սուբյեկտիվ բարեկեցության միավորը յուրաքանչյուր հարցվողի կյանքի ոլորտներից բավարարվածության միավորների միջինի և նույն հարցվողի հոյզերի միջին միավորի հանրագումարների միջինն է: Միավորը բերվում է 0–1 սանդղակի՝ այլ ցուցանիշների հետ համադրելիություն ապահովելու նպատակով:

<sup>11</sup> Ըստ Բրունիի և Պորտանի (2007 թ.)՝ սուբյեկտիվ բարեկեցությունը ներառում է՝ 1. դրական/լավ հոյզեր, 2. բացասական/վաստ հոյզեր, 3. դատողություններ կյանքի վերաբերյալ ընդհանուր առնամք՝ կյանքի համընդգրկուն գնահատական, 4. բավարարվածություն կյանքի ոլորտներից: Ըստ Մարգիլանի և Քարլի (2006 թ.)՝ «Սուբյեկտիվ բարեկեցությունը կյանքի բազմաչափ գնահատական է, որը ներառում է ընկալողական/գիտակցական դատողություններ կյանքից բավարարվածության վերաբերյալ և գգայական/զգացողական գնահատականներ հոյզերի և տրամադրությունների վերաբերյալ»: «Ուժի մեջ մտնելու մասին օրենքը կազմակերպությունը կազմակերպությունը և աշխատանքից բավարարվածությունը, հետաքրքրությունը և գրադարձնը, ինչպես նաև հուզական արձագանքը կյանքում տեղի ունեցող իրադարձություններին, ինչպիսիք են ուրախությունը և տխրությունը» (Պայմեր, 2006 թ.):

**4. Բավարպածություն կյանքի սանդղակից:** Բոլոր հարցվողների գնահատականների միջինների միջինն է, իսկ միավորը բերվում է 0–1 սանդղակի՝ այլ ցուցանիշների հետ համարելիություն ապահովելու նպատակով:

Կատարելով վերը նշված բոլոր հարցումները, հաշվարկելով բոլոր ցուցանիշները, ենթացուցանիշները և դրանց բաղադրիչները, միավորելով ստացված բոլոր արդյունքները՝ կստանանք կյանքի որակի համապարփակ բնութագրի՝ բաղադրյալ ցուցանիշ:

#### Կյանքի որակի միկրոմակարդակի ոլորտները, ցուցանիշներն ու բնութագրիչները

Ոլորտներադրուտ	Ցուցանիշ	Բնութագրիչ	
<b>1) Տնտեսական</b>	<ul style="list-style-type: none"> <li>• Սնունդ</li> <li>• Կենցաղային պայմաններ</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>• Բավարպածություն</li> <li>• Կարևորություն</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>• սննդամթերքի որակ, թարմություն, սնվելու հաճախականություն,</li> <li>• բնակարանի/կացարանի մեջություն, ներքին հարդարման վիճակ, կենցաղային տեխնիկայով/իրերով ապահովածություն, կահավորում, կոմունալ-կենցաղային հարմարություններ, ջեռուցման պայմաններ, սանհանգույցի վիճակ, խոհանոցային հարմարություններ,</li> </ul>
<b>2) Սոցիալական</b>	<ul style="list-style-type: none"> <li>• Աշխատանք</li> <li>• Նյութական ապահովվածություն</li> <li>• Ուսում</li> <li>• Առողջություն</li> <li>• Հանգիստ/ժամանց/, զշակույթ</li> <li>• Հոգևոր կյանք</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>• Բավարպածություն</li> <li>• Կարևորություն</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>• դեկավարությամբ վերաբերմունք, լրացուցիչ արտօնություններ/սոցիալական ապահովության փաթեթ, աշխատանքային հարաբերություններ, անհատի թվականի/ընկերության/արտադրանքի/ծառայության/որակ, աշխատանքային գրաֆիկ, առաջխաղացման հնարավորություններ, հավելավճար/ապագևավճար, աշխատանքի և անձնական կյանքի համատեղելություն, աշխատանքային պայմանների հարմարավետություն, մասնագիտական աճի և ուսուցման հնարավորություն, աշխատանքի տեսակ, աշխատավարձ/եկամուտներ,</li> <li>• աշխատանքի/գործունեությամ կայունության երաշխիքներ,</li> <li>• եւամտի աղբյուրի տեսակ, խնայողություններ, սեփականության/ունեցվածքի մակարդակ, ֆինանսական կայունության աստիճան,</li> <li>• դասավանդման որակ, գրադարանային ծառայություններ, մասնագիտական աճին նպաստող արտապարանային գործունեություն, կիրառական գիտելիքներ, որոնք օգտակար են նախընտրելի այլ աշխատանքի ընդունվելու համար,</li> <li>• առողջական վիճակ, ֆիզիկական ակտիվություն/ֆունկցիոնալություն,</li> <li>• գրադարաններ այցելելու, գոքեր (ոչ մասնագիտական), թերթեր, անսագբեր ընթերցելու, հեռուստացույց դիտելու, երաժշտություն ունկնդիրներ, կինո/թատրոն, համերգեր, սրճարան, ռեստորան այցելելու, պարելու, հորինվ գրառվելու, հանգստի/ճանապարհորդությունների մեկնելու հնարավորություն,</li> <li>• հոգվոր կյանք</li> </ul>
<b>3) Հարաբերություններ և ձեռքբերումներ</b>	<ul style="list-style-type: none"> <li>• Բավարպածություն</li> <li>• Կարևորություն</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>• Բավարպածություն</li> <li>• Կարևորություն</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>• ընտանիքում աջակցության և հոգաստարության, փոխընթերության մթնոլորտով, ընտանիքի հետ ժամանակական անցկացնելու հնարավորությամբ,</li> <li>• ընկերների/բարեկամների հետ ունեցած փոխստահության, շիման և փոխաջացելության մակարդակ,</li> <li>• կյանքում ունեցած ձեռքբերումներ</li> </ul>
<b>4) Քաղաքացիական ազատություն</b>	<ul style="list-style-type: none"> <li>• Բավարպածություն</li> <li>• Կարևորություն</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>• Բավարպածություն</li> <li>• Կարևորություն</li> </ul>	<ul style="list-style-type: none"> <li>• քաղաքացիական ազատության աստիճան</li> </ul>

Տնտեսագիտական այնպիսի հասկացությունների հաշվարկը, ինչպիսիք են կենսամակարդակը, կյանքի որակը, հանրային ծառայությունների արդյունավետությունը և հասարակական բարիքի սպառնան մակարդակը, հնարավոր չէ կատարել միօրինակ մոտեցումներով՝ օգտվելով միայն քանակական, թվարանական բնութագրիչներից և վիճակագրական տվյալներից։ Նման հասկացությունների ճշգրիտ բնութագրուման համար անհրաժեշտ է կառուցել ցուցանիշների այնպիսի համակարգ, որը բաղկացած լինի ինչպես օբյեկտիվ, այնպես էլ սուբյեկտիվ ցուցանիշներից, ինչպես վիճակագրական, այնպես էլ սոցիարցման տվյալներից, ինչպես տնտեսական, քաղաքական այնպես էլ սոցիալական և հոգեբանական պահանջմունքների բավարարման աստիճանից։

Աերլուծության ընթացքում պարզ դարձավ, որ մեկ ցուցանիշի օգնությամբ հնարավոր չէ ճշգրիտ բնութագրել կյանքի որակը։ Անհրաժեշտ է կյանքի որակ արտահայտող ոլորտներից յուրաքանչյուրի համար հաշվարկել համապատասխան ցուցանիշներ (ենթացուցանիշներ)՝ դրանք միավորելով մեկ համապարփակ ցուցանիշում, որը մենք անվանեցինք **կյանքի որակի բաղադրյալ ցուցանիշ**։

Պարզվեց նաև, որ եթե մենք փորձենք կյանքի որակի բնութագիր տալ, օգտվելով այնպիսի ցուցանիշներից, ինչպիսիք են Ձինիի գործակիցը, բնակչության մեկ շնչին բաժին ընկնող ՀՀԱ-ն, դրամական եկամուտների բաշխումն ըստ քանատիլային կամ դեցիլային խճերի, նվազագույն սպառողական զամբյուրի արժեքը և նմանատիկա այլ՝ ոչ բաղադրյալ ցուցանիշներ, ապա մեր ստացած տվյալները, ճիշտ է, կընութագրեն կյանքի որակը, սակայն չեն լինի համապարփակ և համընդգրկուն։ Բաղադրյալ ցուցանիշը թույլ է տալիս անհատի կյանքի տարբեր միջավայրերը և դրանց գնահատման տարբեր մակարդակներն ու տեսանկյուններն արդյունավետորեն միավորել մեկ ցուցանիշում։ Բաղադրյալ ցուցանիշների միջոցով հնարավոր է պարբերական ուսումնասիրություններով որոշակի երևույթների կամ փաստերի փոփոխության վարքագիր մշտադիտարկում իրականացնել։ Հանրային քաղաքականության մշակման, վերանայման ու վերլուծության տեսակետից նման ցուցանիշներն այն արդյունավետ գործիքն են, որոնց միջոցով ուրվագծվում են միտումներն ու շեշտադրվում առանցքային հիմնահարցերը՝ այդպիսով կանխորչելով քաղաքականության առաջնահերթությունները։

Ինչ վերաբերում է <<-ում կյանքի որակի գնահատման բաղադրյալ ցուցանիշների կիրառմանը, առաջարկում ենք օգտագործել բազմազանեցված/փոփոխված ցուցանիշներ՝ ելնելով երկրի ներդաշնակ զարգացման և ներառական տնտեսական աճի գնահատման անհրաժեշտությունից։ Առաջարկում ենք բաղադրյալ ցուցանիշները բաժանել 4 խնդիր՝

- Տնտեսական ոլորտը բնութագրող.** հաշվարկվում է՝ ելնելով մակրո-, մեզո- և միկրոնակարդակներում տնտեսական ցուցանիշներից։
- Սոցիալական ոլորտը բնութագրող,** որը հաշվարկվում է վերը նշված եռամակարդակ բաժանման սոցիալական ցուցանիշների հիմանվրա:
- Քաղաքական/քաղաքացիական ոլորտը բնութագրող.** հաշվարկվում է մակրոնակարդակի՝ ֆիզիկական ոլորտ և ինստիտուտներ, կայունություն և քաղաքացիական, էկո-մեզոնակարդակի՝ շրջակա միջավայր, միկրոնակարդակի՝ հարաբերություններ և ձեռքբերումներ, քաղաքացիական ազատության ցուցանիշների հիմանվրա:

- 4. Համապարփակ.** Վերը նշված ցուցանիշների կշռված միջին թվաբանական (կշիռները որոշվում են հարցումների ժամանակ բնակչության՝ յուրաքանչյուր ոլորտին տրված տեսակարար կշիռների հիման վրա):

Տվյալ ցուցանիշները հնարավորություն են ընձեռում կյանքի որակի վերլուծության ժամանակ գնահատելու համապատասխան ոլորտի ազդեցության չափը վերջնական արդյունքի վրա և սոցիալ-տնտեսական քաղաքականության մշակման համար որպես տեղեկատվական աղբյուր և չափանիշ են ծառայում:

#### Օգտագործված գրականություն

1. Մակարյան Ա., Բաբայան Ա., Հայաստանի Հանրապետությունում կյանքի որակի ցուցանիշի (QoL Index) հետազոտություն, 2010:
2. Գյողայան Վ., Սոցիալական քաղաքականություն (ուսումնական ձեռնարկ), ԵՊՀ, Եր., «Տիր» հրատարակչություն, 2017:
3. Dasgupta P., An inquiry into well-being and destitution. Oxford: "Clarendon" Press, 1993.
4. Schalock R.L., The Concept of Quality of Life: What We Know and Do Not Know, Journal of Intellectual Disability Research, Vol. 48, No. 3, 2004.
5. The Schedule for the Evaluation of Individual Quality of Life-SEIQoL- John P. Browne, Ciaran A. O'Boyle, Hannah M. McGee, Nicholas J. McDonald, C. R.B. Joyce, 1997.
6. Felce D. and Perry J., Quality of Life: Its Definition and Measurement, Research in Developmental Disabilities, Vol. 16, No. 1, 1995.
7. Schalock R.L. and Parmenter T.P., In: Quality of Life: Its Conceptualization, Measurement, and Application A Consensus Document. Washington: IASSID, 2000.
8. Diener E., Emmons R.A., Larsen R.J., Griffin S., The satisfaction with life scale. Journal of Personality Assessment, 1985.
9. Sen A., Capability and well-being. In the quality of life, ed. M. Nussbaum, "Oxford", 1993.
10. Cummins R. A., (1997a). The Comprehensive Quality of Life Scale – Intellectual Disability, Fifth Edition (ComQoL-ID5): Manual. Toorak: Deakin University School of Psychology.
11. <http://hdr.undp.org/en/content/human-development-index-hdi>

## ԱՐՍԵՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Доцент кафедры экономической теории АГЭУ,  
кандидат экономических наук

## ԳԱԳԻԿ ԱԿՈՊՅԱՆ

Студент 4-ого курса бакалавриата финансового факультета  
по специальности "Страховое дело" АГЭУ

**Необходимость и порядок расчета композитных показателей, характеризующих качество жизни.** – В рамках данной статьи предполагается обосновать необходимость применения составных показателей в системе показателей, характеризующих качество жизни с точки зрения реалистической оценки уровня социально-экономического развития в Армении и разработки эффективных программ. Чтобы достичь этой цели, качество жизни изучалось на трех уровнях его проявления – макро, микро, меzo: каждый в свою очередь путем разделения приоритетных областей. Группы показателей были разделены по всем сферам, с помощью которых и был расчитан композитный показатель. В статье представлена методология создания комплексного составного индекса.

**Ключевые слова:** качество жизни, индекс человеческого развития, композитный индекс, индикаторы, сфера жизни, график оценки качества жизни, субъективная оценка.

JEL: J10, J17, J18

## ARSEN PETROSYAN

Associate professor the Chair of Economic Theory at ASUE,  
PhD in Economics

## GAGIK HAKOBYAN

4th year Bachelor student at the  
Department of Finance, majoring in Insurance at ASUE

**The Need for Composite Indicators Characterizing the Quality of Life and the Order of Calculation.** – Within the framework of this article, it is supposed to substantiate the need to apply composite indicators in the system of indicators characterizing the quality of life from the point of view of realistic assessment of the level of socio-economic development in Armenia and the development of effective programs. To achieve this goal, the quality of life has been studied on three levels of its manifestation – macro, micro, mezo: each in turn by separating priority areas. The groups of indicators were divided in all areas, with the help of which the composite index was calculated. The article presents the methodology for creating a comprehensive composite index.

**Key words:** quality of life, human development index, composite index, indicators, sphere of life, schedule for assessing quality of life, subjective assessment.

JEL: J10, J17, J18